Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
հուլիսի 8 -ի N 855 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման ընթացքում որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման իրականացման ու ղեկավարման գործընթացները: Օդանավի կորելու, աղետալի իրավիճակում հայտնվելու, պատահարի կամ օդային երթևեկության այլ վտանգ սպառնալու դեպքում անհրաժեշտ միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 11-ի N 1043-Ն որոշմամբ սահմանված կարգի դրույթների համաձայն:

2. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) որոնողափրկարարական աշխատանքներ՝ միջոցառումների համակարգ՝ ուղղված մարդկանց, կենդանիների և նյութական արժեքների հայտնաբերմանը, փրկմանը և համապատասխան օգնության ցուցաբերմանը.

2) որոնողափրկարարական ուժեր՝ որոնողափրկարարական աշխատանքներ կատարելու համար նախատեսված, համապատասխան փրկարարական միջոցներով հագեցված, համապատասխան դասընթացներ անցած փրկարարական կարգերով որակավորված մասնագիտացված փրկարարներով համալրված ստորաբաժանումներ.

3) որոնողափրկարարական միջոցներ՝ որոնողափրկարարական աշխատանքների կատարման ու դրանց ղեկավարման համար նախապատրաստված տրանսպորտային, տեխնիկական, գիտատեխնիկական միջոցներ, զույք, հանդերձանք, նյութեր, սարքավորումներ:

4) տեղական ինքնակառավարման ուժեր և միջոցներ՝ արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման նպատակով տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ներգրավվող ուժեր ու միջոցներ։

II. ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ, ՈՒԺԵՐԸ, ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

3. Հայաստանի Հանրապետության տարածքում որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը, համակարգումը և ղեկավարումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ստորաբաժանումները՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ուժերի և միջոցների սերտ համագործակցությամբ, իսկ առանձին դեպքերում, ելնելով իրավիճակից, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության առաջարկությամբ կարող է իրականացվել Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից։

4. Հայաստանի Հանրապետության տարածքում որոնողափրկարարական աշխատանքներին անհրաժեշտության դեպքում ներգրավվում են պետական կառավարման լիազոր մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ուժերն ու միջոցները՝ այդպիսիք նախատեսված լինելու դեպքում։

5. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները որոնողափրկարարական աշխատանքների մասին տեղեկացվում են Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ստորաբաժանման կողմից։ Նրանց հաղորդվում են՝

1) արտակարգ իրավիճակի տեսակը.

2) որոնողափրկարարական աշխատանքների իրականացման վայրը կամ հավանական վայրը.

3) հնարավոր տուժածների թիվը.

4) առկա և սպասվելիք վտանգավոր իրավիճակների մասին տեղեկությունները.

5) տեղեկություններ ներգրավված ուժերի և միջոցների մասին.

6) տեղեկություններ լրացուցիչ, այդ թվում՝ և տեղական ինքնակառավարման մարմինների, ուժեր և միջոցներ ներգրավելու անհրաժեշտության կամ դրա բացակայության մասին։

6. Հաղորդումները գրանցվում են ըստ հաստատված կարգի։

7. Որոնողափրկարարական աշխատանքների իրականացման մասին տեղեկատվություն ստանալուց հետո Հայաստանի Հանրապետության պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների համապատասխան ստորաբաժանումները՝ այդպիսիք նախատեսված լինելու դեպքում, անհապաղ բերվում են համապատասխան պատրաստականության վիճակի։

8. Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության կողմից որոնողափրկարարական աշխատանքներ սկսելու մասին որոշման ընդունումից հետո այն հաղորդվում է այլ լիազոր մարմինների, որից հետո որոնողափրկարարական ուժերն սկսում են որոնողափրկարարական աշխատանքների իրականացումը։

9. Որոնողափրկարարական ուժերը պարտավոր են՝

1) որոնողափրկարարական ուժերն ու միջոցները մշտապես պահել պատշաճ վիճակում.

2) տեխնածին և տարերային արտակարգ իրավիճակների դեպքում կազմակերպել և իրականացնել որոնողափրկարարական աշխատանքներ.

3) լրացնել որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպման և անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերը.

4) աջակցել կամավոր որոնողափրկարարական ուժերի պատրաստման աշխատանքներին.

5) կազմակերպել որոնողափրկարարական ուժերի ու միջոցների շուրջօրյա հերթապահություն։

10. Որոնողափրկարարական ուժերն իրավունք ունեն՝

1) արտակարգ իրավիճակի մասին ստանալու ամբողջական և ճշգրիտ տեղեկություններ.

2) ստանալու տեղեկություններ որոնողափրկարարական աշխատանքներում ներգրավված այլ ուժերի ու միջոցների մասին.

3) ստանալու հավաստի տեղեկություններ արտակարգ իրավիճակի հետևանքով այլ վտանգավոր իրավիճակների առաջացման հնարավորության մասին։

11. Որոնողափրկարարական ուժերի ղեկավարումն իրականացնում է որոնողափրկարարական աշխատանքների վայր առաջինը ժամանած փրկարար ուժերի ղեկավարը, մինչև նշված աշխատանքների ղեկավարման իրավասություն ունեցող վերադաս պաշտոնատար անձի ժամանումը, որը կարող է ղեկավարումը վերցնել իր վրա։ Որոնողափրկարարական աշխատանքների ղեկավարումը կարող է իրականացվել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից։

12. Որոնողափրկարարական աշխատանքներին մասնակցող ծառայությունների անձնակազմերն այդ աշխատանքների արդյունավետության ապահովման նպատակով պետք է պարտադիր պատրաստվեն և վերապատրաստվեն՝ կիրառելով փորձնական տագնապներ և ուսումնական վարժանքներ։

13. Որոնողափրկարարական աշխատանքները համակարգող ղեկավար մարմնին ցանկացած պահի պետք է հասանելի լինեն որոնման շրջանում իրականացվող աշխատանքների մասին նոր տեղեկատվությունը, այդ թվում՝ տվյալներ, որոնք վերաբերում են՝

1) իրականացվող աշխատանքներին, որոնողափրկարարական հաշվարկներին.

2) որոնողափրկարարական աշխատանքների իրականացման ընթացքում օգտագործվող կապի միջոցներին.

3) որոնման շրջանում գործունեություն իրականացնող լիազոր մարմիններին (նրանց պաշտոնական ներկայացուցիչներին).

4) ներգրավվող այլ ուժերի և միջոցների մասին՝ անկախ սեփականության ձևից և գերատեսչական պատկանելիությունից, որոնք կարող են անհրաժեշտ լինել որոնողափրկարարական աշխատանքների իրականացման ընթացքում։

14. Որոնողափրկարարական աշխատանքների ժամանակ օգտագործվում են կապի բոլոր համակարգերը, իսկ անհրաժեշտության դեպքում բոլոր գերատեսչությունները և ծառայությունները պարտավոր են տրամադրել իրենց կապուղիները և աջակցել անխափան կապի մատակարարմանը։

15. Որոնողափրկարարական աշխատանքները համակարգող ղեկավար մարմինը, ելնելով ստեղծված իրավիճակից և վերլուծելով որոնողափրկարարական աշխատանքների մասին ստացված տվյալները, պետք է նախապատրաստի որոնողափրկարարական աշխատանքների իրականացման մանրամասն պլաններ կապված որոնման շրջանում աշխատանքների կազմակերպման հետ, որոնցում պետք է նշվեն նաև որոնողափրկարարական աշխատանքներին մասնակցած ուժերի և միջոցների սպասարկման միջոցառումները, այդ թվում՝ նաև օտարերկրյա որոնողափրկարարական ուժերի մասով։

16. Որոնողափրկարարական աշխատանքները համակարգող ղեկավար մարմնին կից պետք է ստեղծվի տուժածներին և նրանց հարազատներին անհրաժեշտ օգնություն ցուցաբերող խումբ՝ կազմված համապատասխան լիազոր մարմնի, մամուլի, տեղական ինքնակառավարման մարմինների, բժշկական, միգրացիոն և այլ ծառայությունների մասնագետներից։

17. Տուժած կամ զոհված անձանց մասին պետք է տեղեկացվի նրանց հարազատներին, ինչպես նաև տուժածների հարազատներին ցուցաբերվի հոգեբանական, բժշկական, իրավաբանական, ֆինանսական օգնություն, ապահովվի օտարերկրյա քաղաքացիների տեղավորումը հյուրանոցներում, աշխատանքներ իրականացվեն դեսպանությունների և հյուպատոսությունների հետ՝ նրանց տուժած քաղաքացիների մասին անհրաժեշտ տեղե-

կություններ տրամադրելու նպատակով՝ օտարերկրյա քաղաքացիներին օգնեն միգրացիոն և մաքսային խնդիրների առաջացման դեպքերում։

Նշված աշխատանքները պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով կազմակերպում է Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը։

18. Որոնողափրկարարական աշխատանքների ժամանակ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ կապը պետք է իրականացվի Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով։

19. Որոնողափրկարարական աշխատանքներում ներգրավվող ստորաբաժանումները պատրաստականության վիճակի են բերվում՝ ըստ սահմանված կարգի։

III. ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

20. Որոնողափրկարարական աշխատանքների կազմակերպումը ներառում է հետևյալ հիմնական փուլերը՝

1) արտակարգ իրավիճակի մասին տեղեկատվության ստացումը և վերլուծումը.

2) հետախուզման կազմակերպումը.

3) որոնողափրկարարական աշխատանքների իրականացման մասին որոշման ընդունումը, բնակչության իրազեկումը.

4) փրկարարների և անհրաժեշտ տեխնիկայի տեղափոխումը որոնողափրկարարական աշխատանքների իրականացման տարածք.

5) որոնողափրկարարական աշխատանքների անմիջական անցկացումը.

6) տուժածների հայտնաբերումը, առաջին բուժօգնության ցուցաբերումը, մասնագիտացված բուժօգնության կազմակերպումը և տարահանումը.

7) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարհանումն անվտանգ շրջաններ.

8) արտակարգ իրավիճակի օջախի մեկուսացման աշխատանքների կազմակերպումը.

9) կապի համակարգի անխափան գործունեության կազմակերպումը և ապահովումը:

21. Որոնողափրկարարական աշխատանքներն սկսվում են փրկարարների արտակարգ իրավիճակի գոտի ժամանելու պահից: Այդ աշխատանքները պետք է կատարվեն անմիջապես, ցանկացած պայմաններում, արդարացված ռիսկի սահմաններում:

22. Որոնողափրկարարական աշխատանքները, որպես կանոն, կատարվում և ավարտվում են մինչև 10 օրվա ընթացքում, սակայն աշխատանքների վերջնական դադարեցման վերաբերյալ որոշումն ընդունում է այդ աշխատանքները ղեկավարող պաշտոնատար անձը:

IV. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ

23. Հայաստանի Հանրապետության տարածքում և Հայաստանի Հանրապետության տարածքին հարակից շրջաններում որոնողափրկարարական աշխատանքներում միջազգային համագործակցությունն իրականացվում է միջպետական պայմանագրերի համաձայն:

24. Հայաստանի Հանրապետության տարածքում որոնողափրկարարական աշխատանքների համակարգման լիազորված մարմինը որոնողափրկարարական աշխատանքների համակարգման և տեխնիկական աջակցության նպատակով փոխադարձ համաձայնության սկզբունքով համագործակցում է հարևան երկրների համապատասխան մարմինների ու որոնողափրկարարական խմբերի հետ, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ապահովում է այլ երկրների որոնողափրկարարական ուժերի ու միջոցների անարգել մուտքը Հայաստանի Հանրապետության տարածք՝ այն համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հետ:

25. Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից միջազգային հանրությանը որոնողափրկարարական աշխատանքներ կատարելու խնդրանքով դիմելու դեպքում մասնակցության ցանկություն հայտնած պետությունները կարող են մասնակցել որոնո-ղափրկարարական աշխատանքներին Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության միջոցով՝ սահմանված կարգով։

26. Լիազորված մարմինը դիմող կողմին հայտնում է այն պայմանները (եթե այդպիսիք կան), որոնց համաձայն կարող է իրականացվել նշված առաքելությունը, կամ դրանք անհրաժեշտ են օտարերկրյա պետությունների որոնողափրկարարական խմբերին՝ Հայաս-տանի Հանրապետություն մուտքի թույլտվության հատկացման համար։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ